ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 25-ին, ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի և ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի համատեղ գիտական նիստ։

Ներածական ճառով նիստը բացեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի երկրորդ քարտուղար ընկ. Հովհ. Բաղդասարյանը։

—Հարյուր տարի առաջ,—ասաց նա—միջազգային բանվորական շարժման պատմության մեջ մի անջնջելի էջ գրվեց. 1864 թ. սեպտեմբերի 28-ին հիմնադրվեց պրոլետարիատի առաջին մասսայական միջազգային հեղափոխական կազմակերպությունը՝ Առաջին ինտերնացիոնալը։ Այսօր մենք խորին երախտագիտությամբ և ակնածանքով ենք արտասանում անուններն Առաջին ինտերնացիոնալի ստեղծողներ, գիտական կոմունիզմի հիմնադիրներ Մարքսի և Էնգելսի, որոնք իրենց՝ աշխարհը վերափոխող մեծ ուսմունքով վճռական դեր խաղացին մարդկության բախտի ու ճակատագրի համար։ Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման 100-ամյակը ամբողջ կոմունիստական ու բանվորական շարժման տոնն է, շարժում, որը մարդկությանն առաջնորդում է հանուն խաղաղության, սոցիալական առաջադիմության, հանուն կոմունիզմի։

Առաջին ինտերնացիոնալի պատմական նշանակության մասին զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Սիմոնյանը։

—Առաջին ինտերնացիոնալի երևան գալը,—իր զեկուցման մեջ նշեց նա,—պայմանավորված էր պատմական կոնկրետ հանգամանքներով։ Առաջին ինտերնացիոնալի կազմակերպմանը նախորդող երեք տասնամյակներին Արևմտյան Եվրոպայում և Ամերիկայում կապիտալիստական արտադրությունը անևախընթաց վերելք էր ապրում, իր շրջանակների մեջ ներգրավելով նորանոր երկրներ։ Կապիտալիզմի զարգացման զուգընթաց քաղաքական պայքարի ասպարեզ մտավ արդյունաբերական պրոլետարիատը, և 1830-ական թվականներից սկսվեց դասակարգային պայքարի նոր էտապը։ Այս շրջանում և հատկապես 1848 թ. հեղափոխության ժամանակ և դրան հաջորդող տարիներին զգացվեց պրոլետարիատի միասնական պայքարի կազմակերպման անհրաժեշտությունը։

Այնուհետև զեկուցողը մանրամասն կանգ առավ հասարակության զարգացման, պրոլետարիատի պայքարի գործում Առաջին ինտերնացիոնալի հսկայական նշանակության բաղմակողմանի լուսաբանմանը, նշելով, որ Առաջին ինտերնացիոնալի մեծագույն երախտիքն այն էր, որ նա հստակորեն սահմանեց պրոլետարիատի կուսակցության դերը դասակարգային պայքարում, պարզաբանեց բանվոր դասակարգի մերձավորագույն և վերջնական նպատակները, նրա գործունեությունը գյուղացիական ու ազգային հարցերում, արհմիութենական ու կոոպերատիվ շարժումներում, զինված ապստամբության կազմակերպման ու անցկացման սկզբունքների իրականացման և այլ հարցերում։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Արզումանյանը հանդես եկավ «Առաջին ինտերնացիոնալի հեղափոխական տրադիցիաները միջազգային կոմունիստական շարժման ներկա էտապում» թեմայով։ Նա, մասնավորապես կանգ առավ ինտերնացիոնալում Մարքսի, Էնգելսի, Լենինի դերի մասին՝ բանվոր դասակարգի հեղափոխական շարժումների ծավալման ու հեղափոխական ուժերի համախմբման գործում։

—Ինտերնացիոնալը,—ասաց նա,—համաշխարհային պրոլետարիատին տվեց իր պատմական դերի գիտակցում, մշակեց ու գործնականորեն բացահայտեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի էությունը և դրեց աշխարհի պրոլետարիատի միջազգային կազմակերպվածության ու համերաշխության հիմքերը, անդուլ պայքար ծավալեց միջազգային բանվորական շարժման միասնության ամրապնդման համար, առաջին անգամ սկզբնավորեց սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ համաշխարհային մասշտաբով։

Առաջին ինտերնացիոնալի տրադիցիաները իզուր չանցան։ Նրանց իսկական ժառանգորդն ու շարունակողը դարձավ Երրորդ՝ կոմունիստական ինտերնացիոնալը, ժամանակակից միջազգային կոմունիստական շարժումը։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Բարսեղյանը «Կոմունիզմի ծրագրային փաստաթուղթը» իր զեկուցման մեջ մանրամասնորեն կանգ առավ կոմունիստական ինտերնացիոնալի կոնգրեսի կողմից ընդունած «Կոմունիստական կուսակցության մանիֆեստիս գաղափարների լուսաբանման վրա, ցույց տալով, որ այդ գաղափարների վրա այսօր էլ հենվում են աշխարհի բոլոր կոմունիստական և բանվորական կուսակցություններն ու աշխատավորական բոլոր կազմակերպությունները՝ իրենց գործունեության մեջ։

Այնուհետև ընկ. Բարսեղյանը մանրամասն խոսեց հայ մամուլում ինտերնացիոնալի արձագանքների մասին։ Նա նշեց, որ Առաջին ինտերնացիոնալի վսեմ գաղափարները, Փարիզի կոմունայի գործունեությունը ոչ միայն ժամանակին արձագանք են գտել հայ պարբերական մամուլում, այլև ինտերնացիոնալի տրադիցիաները մարքսիստ-լենինյանների կողմից լայն տարածում են գտել հայ իրականության մեջ։